ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

10 հոկտեմբերի 2016 թվականի N 129-Ա

Ա. ԳԱԼՍՏՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 163-րդ հոդվածի և 164-րդ հոդվածի 1-ին մասի, հիմք ընդունելով *Ա. Գալստյանի* անձնական դիմումը՝ **կարգադրում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության <<Ծաղկաձորի բժշկական ամբուլատորիա>> պետական փակ բաժնետիրական ընկերության տնօրեն ***Արթուր Գալստյանին*** տրամադրել 2016 թվականի աշխատանքային տարվա իր ամենամյա նվազագույն արձակուրդի չօգտագործած մասը՝ տաս աշխատանքային օր՝ 2016 թվականի հոկտեմբերի 12-ից մինչև հոկտեմբերի 25-ը ներառյալ:

2. ***Արթուր Գալստյանի*** արձակուրդում գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության <<Ծաղկաձորի բժշկական ամբուլատորիա>> պետական փակ բաժնետիրական ընկերության տնօրենի լիազորությունների իրականացումը ժամանակավորապես դնել ընկերության գլխավոր հաշվապահ՝ ***Գայանե Խաչատրյանի*** վրա:

3. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության <<Ծաղկաձորի բժշկական ամբուլատորիա>> պետական փակ բաժնետիրական ընկերության գլխավոր հաշվապահ՝ ***Գայանե Խաչատրյանին*** և <<Հրազդանի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության տնօրեն՝ ***Ռոբերտ Սահակյանին*** ապահովել <<Ծաղկաձորի բժշկական ամբուլատորիա>> պետական փակ բաժնետիրական ընկերության սպասարկման տարածքի բնակչության առաջնային բժշկական օգնության և սպասարկման իրականացումը՝ <<Հրազդանի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության համապատասխան մասնագետի *(ընտանեկան բժիշկ՝ Արուս Բախշյան)* կողմից:

4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ. ԳՈՒԼՈՅԱՆ

2016 թվականի հոկտեմբերի 10
ք. Հրազդան